

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/2

28 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ 16.06.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 27.05.2015 թ-ի թիվ 5101455 ակտի դեմ:

«Կառվ-Օիլ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

2015թ. մայիսի 12-ին Վանաձորի ՏՀՏ-ի կողմից «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ում կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որի արդյունքներով 27.05.2015թ. կազմվել է թիվ 5101455 ստուգման ակտը:

Այդ ստուգման ակտն անօրինական է՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Ստուգման ակտում արձանագրված խախտումը կայանում է նրանում, որ «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ն ք.Վանաձոր, Ճավճավաձե 3 հասցեում իրականացնում է ավտոտեխսպասարկման գործունեություն 2 աշխատատեղով, սակայն ընկերության կողմից «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 5-րդ կետի համաձայն 2015թ. ապրիլից-հունիս ամիսների համար Վանաձորի ՏՀՏ հայտարարություն է ներկայացվել 1 աշխատատեղի համար, որով էլ խախտվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 9-րդ կետի պահանջները:

Մինչդեռ «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ն ք.Վանաձոր, Ճավճավաձե 3 հասցեում 2 աշխատատեղով ավտոտեխսպասարկման գործունեություն չի իրականացնում, իսկ դրա վերաբերյալ ստուգման ակտում արձանագրված հանգամանքը չունի որևէ փաստական հիմնավորում:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի համաձայն՝

«9. Արտոնագրային վճար վճարողները գործունեության արդյունքներից անկախ արտոնագրային վճարը հաշվարկում և վճարում են հետևյալ չափերով՝

(...)

10. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի մեկամսյա չափերը որոշվում են մեկ միավորի արտոնագրային վճարի մեկամսյա դրույքաչափի և ելակետային տվյալի մեծության, իսկ սույն հավելվածով գործակից սահմանված լինելու դեպքում՝ նաև գործակցի արտադրյալով:

(...)

13. Արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող ելակետային տվյալներն են՝

(...)

5) ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղը: Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղ է համարվում ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկման

տեսակների մեկ ամբողջական գործընթացի ապահովման համար հատուկ սարքավորումներով կահավորված տարածքը (..)»:

«ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ն ք.Վանաձոր, Ճավճավաձե 3 հասցեում իրականացնում է ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկման մեկ տեսակի՝ յուղի փոխման գործունեություն, ունի ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկման այդ տեսակի՝ յուղի փոխման մեկ ամբողջական գործընթացի ապահովման համար հատուկ սարքավորումներով կահավորված մեկ տարածք, այսինքն՝ մեկ աշխատատեղ:

Ուստի անհասկանալի է, թե ստուգման ակտում ինչի հիման վրա է արձանագրվել, որ «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ն ք.Վանաձոր Ճավճավաձե 3 հասցեում իրականացնում է ավտոտեխսպասարկման գործունեություն 2 աշխատատեղով, ինչից հետևում է, որ ըստ ստուգումն իրականացրած տեսուչների՝ ք.Վանաձոր, Ճավճավաձե 3 հասցեում առկա է յուղի փոխման մեկ ամբողջական գործընթացի ապահովման համար հատուկ սարքավորումներով կահավորված ոչ թե մեկ, այլ երկու տարածք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Վանաձորի Ճավճավաձե 3 հասցեում յուղի փոխման մեկ ամբողջական գործընթացի ապահովման համար հատուկ սարքավորումներով կահավորված երկու տարածքի առկայության մասին վկայող որևէ փաստաթուղթ ստուգման ակտին կցված չէ, ինչի մասին է վկայում կից ներկայացվող՝ վիճարկվող ստուգման ակտը: Դրանից հետևում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով կրելով «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ի համար նշված ոչ բարենպաստ փաստական հանգամանքի ապացուցման բեռը՝ վարչական մարմինը չի կատարել իր այդ պարտականությունը: Հետևաբար, ստուգման ակտում արձանագրված խախտումը մտացածին է և «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 9-րդ կետի պահանջների խախտման մասին խոսք լինել չի կարող:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ ընկերությունը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ֆինանսների նախարարության Վանաձորի տարածքային հարկային տեսչության 2015թ. մայիսի 27-ի թիվ 5101455 ստուգման ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 21.04.2015 թ-ի թիվ 5101455 հանձնարարագրի համաձայն «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ում կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 27.05.2015թ-ի թիվ 5101455 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով արտոնագրային վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել 59.922 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ն ք.Վանաձոր, Ճավճավաձե 3 հասցեում իրականացնում է ավտոտեխսպասարկման գործունեություն 2 աշխատատեղով: Սակայն համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 5-րդ կետի ընկերության կողմից 08.04.2015թ.-ին Վանաձորի ՏՏՏ է ներկայացվել արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություն 2015թ. ապրիլից-հունիս ամիսների համար 1 աշխատատեղի համար: Խախտվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 8 հավելվածի 9-րդ կետի պահանջները, համաձայն որի արտոնագրային վճարը պետք է հաշվարկվեր 72.000 դրամ (2 աշխատատեղ X 12000 դրամ X 3 ամիս), սակայն կազմակերպության կողմից 2015թ. ապրիլից-հունիս ամիսներին պակաս է ցույց տրվել 36.000 դրամ: Համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի ենթակա է գանձման պետ. բյուջե պակաս ցայց տրված արտոնագրային վճարը՝ 36.000 դրամ, ինչպես նաև տուգանք պակաս ցայց տրված արտոնագրային վճարի 50%-ի չափով՝ 18000 (36000 X 50%) դրամ:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների դրույթները արտոնագրային վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 60.678 դրամ:

Քննարկման ընթացքում ստուգումն իրականացնող անձինք նշեցին, որ իրականացված ստուգմամբ արձանագրվել է, որ «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ն ք.Վանաձոր, Ճավճավաձե 3 հասցեում իրականացնում է ավտոտեխսպասարկման գործունեություն 2 աշխատատեղով, այն է՝ 2 ավտոտեխսպասարկման կետերի միջոցով: Ընդ որում, ստուգման ակտը կազմելուց հետո ստուգումն իրականացնող անձինք արձանագրել են, որ նշված 2 ավտոտեխսպասարկման կետերից մեկը գտնվում է փակ վիճակում: Նշված հանգամանքը, ըստ էության, ևս վկայում է ստուգման ընթացքում «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից գործունեությունը 2 աշխատատեղով կազմակերպելու մասին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է մեջբերել «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի հետևյալ դրույթները.

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված N 7-ի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեություն է համարվում ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) միջոցով ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումը: Ավտոտեխսպասարկման կայան (կետ) է համարվում ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման համար հարմարեցված աշխատատեղի (աշխատատեղերի) համար առանձնացված մշտական կամ ժամանակավոր շինությունը:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված N 8-ի 13-րդ կետի համաձայն. «Արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող ելակետային տվյալներն են՝

...

5) ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղը: Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղ է համարվում ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկման տեսակների մեկ ամբողջական գործընթացի ապահովման համար հատուկ սարքավորումներով կահավորված տարածքը: Ավտոտրանսպորտային միջոցների

տեխնիկական սպասարկման տարբեր աշխատատեղերը մեկ անձի կողմից համատեղման դեպքում համատեղած աշխատատեղերը համարվում են մեկ աշխատատեղ, իսկ նույնատիպ (միանման) աշխատատեղերի առկայության դեպքում այդ աշխատատեղերը դիտարկվում են որպես առանձին աշխատատեղեր.»:

Քննարկվող դեպքում իրականացված ստուգմամբ արձանագրվել է, որ «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ն ք.Վանաձոր, Ճավճավաձե 3 հասցեում նույնատիպ (միանման) աշխատատեղերի (յուղման կետեր) միջոցով իրականացվում է ավտոտեխսպասարկման գործունեություն, սակայն 2015թ. ապրիլից-հունիս ամիսների համար արտոնագրային վճար վճարող համարվելու մասին դիմում-հայտարարությունը ներկայացվել է 1 աշխատատեղի համար: Այսինքն, «ԿԱՌԿ-ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից խախտվել են «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջները, որի համար Ակտով կիրառվել են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության համապատասխան միջոցները:



Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 27.05.2015 թ-ի թիվ 5101455 ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ԱԻՐՈՒՄՅԱՆ